

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

____._____. 2017 թվականի

N _____ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2017/2018 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԿԱ
ԱՍՊԻՐԱՆՏՈՒՐԱ ՈՒ ԴՈԿՏՈՐԱՆՏՈՒՐԱ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՏԵՂԵՐԸ ԵՎ ԱՌԿԱ
ՈՒՍՈՒՑՄԱՍԲ ԱՍՊԻՐԱՆՏՈՒՐԱ ՈՒ ԴՈԿՏՈՐԱՆՏՈՒՐԱ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ
ՏԵՂԵՐԻ ԲԱՇԽՈՒՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

<<Կրթության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 28-րդ հոդվածի 6-րդ մասին և <<Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության 2017/2018 ուսումնական տարվա՝

1) ասպիրանտուրա ընդունելության տեղերը՝

ա. պետական կրթաթոշակով, նպաստի ձևով ուսման վճարի փոխհատուցմամբ, առկա ուսուցմամբ՝ 140 տեղ՝ պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետման իրավունքով.

բ. նպաստի ձևով ուսման վճարի փոխհատուցմամբ, հեռակա ուսուցմամբ՝ 202 տեղ.

գ. պետական կրթաթոշակով, նպաստի ձևով ուսման վճարի փոխհատուցմամբ, միջպետական համաձայնագրերով՝ 24 տեղ.

2) պետական կրթաթոշակով, նպաստի ձևով ուսման վճարի փոխհատուցմամբ՝ օրդինատուրա ընդունելության 95 տեղ.

3) պետական կրթաթոշակով, նպաստի ձևով ուսման վճարի փոխհատուցմամբ՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համար նախատեսված ինտերնատուրա ընդունելության 20 տեղ.

4) պետական կրթաթոշակով, նպաստի ձևով ուսման վճարի փոխհատուցմամբ՝ դոկտորանտուրա ընդունելության 13 տեղ:

2. Հաստատել Հայաստանի Հանրապետության 2017/2018 ուսումնական տարվա առկա ուսուցմամբ ասպիրանտուրա ու դոկտորանտուրա ընդունելության տեղերի բաշխումը՝ համաձայն հավելվածի:

3. Սահմանել, որ՝

1) 2017/2018 ուսումնական տարվա ասպիրանտուրայի առկա և հեռակա, ինչպես նաև օրդինատուրայի ընդունելության ուսուցմամբ թափուր մնացած տեղերը բարձրագույն ուսումնական հաստատություններում ու գիտական կազմակերպություններում վերաբաշխում է Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի, Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունների և գիտական կազմակերպությունների ներկայացրած լրացուցիչ հայտերի՝ իրենց տրամադրված տեղերի շրջանակներում.

2) 2017/2018 ուսումնական տարվա ասպիրանտուրայի ընդունելության առկա և հեռակա, ինչպես նաև օրդինատուրայի ուսուցմամբ պահուստային տեղերի բաշխումը վերապահվում է Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությանը:

3) 2017/2018 ուսումնական տարվա ասպիրանտուրայի հեռակա և օրդինատուրայի ընդունելության տեղերը բաշխում և հաստատում է Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«ՀՀ կրթության և գիտության նախարար Լևոն Մկրտչյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2017/2018 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԿԱ ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՄԲ
 ԱՍՊԻՐԱՆՏՈՒՐԱ ԵՎ ԴՈԿՏՈՐԱՆՏՈՒՐԱ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՏԵՂԵՐԻ ԲԱՇԽՈՒՄԸ**

NN ը/կ	Բուհը, գիտական կազմակերպությունը	Գերատեսչական պատկանելու- թյունը	Մասնա- գիտության դասիչը	Մասնագիտությունը	2017-2018 թթ.	
					ասպիրանտուրա	դոկտորանտուրա
1.	Երևանի պետական համալսարան	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	Ա.01.02	Դիֆերենցիալ հավասարումներ, մաթեմատիկական ֆիզիկա	1	
			Ա.01.09	Մաթեմատիկական կիբեռնետիկա և մաթեմատիկական տրամաբանություն	2	
			Ա.04.02	Տեսական ֆիզիկա	1	
			Ա.04.07	Կոնդենսացված վիճակի ֆիզիկա	1	
			Ա.04.21	Լազերային ֆիզիկա	1	
			Գ.00.04	Կենսաքիմիա	1	
			Գ.00.08	Կենդանաբանություն, մակարոնոթյուն, էկոլոգիա	1	
			Ե.27.01	Էլեկտրոնիկա, միկրո և նանոէլեկտրոնիկա /ՍԻՆՈՓՍԻՍ/	1	
			Է.00.01	Հայոց պատմություն	2	
			Է.00.02	Համաշխարհային պատմություն, միջազգային հարաբերություններ	1	
			Ը.00.01	Ընդհանուր տնտեսագիտություն	1	1
			Ը.00.02	Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում	1	
			Ը.00.03	Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում	1	
			Ը.00.08	Մաթեմատիկական տնտեսագիտություն	2	
Թ.00.01	Փիլիսոփայություն	1				

			Թ.00.06	Մշակութաբանություն	2	
			Ժ.01.02	Նորագույն շրջանի հայ գրականություն. գրականության տեսություն	1	
			Ժ.01.06	Ժուռնալիստիկա	1	
			Ժ.02.02	Ընդհանուր և համեմատական լեզվաբանություն	1	
			Ժ.02.07	Ռոմանոգերմանական լեզուներ /անգլերեն/	1	
			ԺԲ.00.02	Հանրային իրավունք	1	
			ԺԲ.00.03	Մասնավոր իրավունք	1	
			ԺԲ.00.04	Դատական իրավունք	2	
			ԺԲ.00.06	Միջազգային իրավունք	2	
			ԺԵ.00.01	Դեղագիտություն	1	
			ԺԵ.00.03	Կերպարվեստ. դեկորատիվ և կիրառական արվեստ, դիզայն	1	
			ԻԲ.00.01	Սոցիոլոգիական հետազոտությունների մեթոդաբանություն, տեսություններ, սոցիալական տեխնոլոգիաներ և գործընթացներ	2	
			ԻԵ.00.01	Աստվածաբանություն	1	
	ԸՆԴԱՄԵՆԸ				35	1
2.	Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	Ա.01.02	Դիֆերենցիալ հավասարումներ, մաթեմատիկական ֆիզիկա	1	
			Ե.09.01	Էլեկտրատեխնիկա, էլեկտրամեխանիկա, էլեկտրատեխնոլոգիաներ	1	
			Ե.11.01	Ինֆորմացիայի ստացման և չափման մեթոդներ, սարքեր և համակարգեր	1	
			Ե.12.01	Ռադիոտեխնիկա, ռադիոհաճախականային սարքավորումներ, համակարգեր, տեխնոլոգիաներ	1	
			Ե.12.03	Հեռահաղորդակցական ցանցեր, սարքավորումներ և համակարգեր	1	
			Ե.13.01	Կառավարում, կառավարման համակարգեր և դրանց տարրերը	1	
			Ե.13.02	Ավտոմատացման համակարգեր /1 տեղը ՍԻՆՈՓՍԻՍ/	3	
			Ե.13.03	Հաշվողական մեքենաներ, համալիրներ, համակարգեր, ցանցեր, դրանց տարրերը և սարքավորումները	1	
			Ե.14.02	Միջուկային էներգետիկ կայանքներ	1	
			Ե.16.02	Մետալուրգիա	1	

			Ե.19.01	Թեթև արդյունաբերության նյութագիտություն, ապրանքագիտություն և տեխնոլոգիա	1	
			Ե.27.01	Էլեկտրոնիկա, միկրո և նանոէլեկտրոնիկա	1	
	ԸՆԴԱՄԵՆԸ				14	
3.	Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	Ը.00.02	Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում (գործարար կառավարում, մակրոէկոնոմիկա, մարքեթինգ, կոմերցիա և բիզնեսի կազմակերպում)	4	
			Ը.00.03	Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում (ֆինանսներ, ֆինանսական հաշվառում, կառավարչական հաշվառում և աուդիտ, վիճակագրություն)	4	
	ԸՆԴԱՄԵՆԸ				8	
4.	Հայաստանի ազգային ագրարային համալսարան	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	Ե.18.01	Բուսական և կենդանական ծագման մթերքների վերամշակման և արտադրության տեխնոլոգիա	1	
			Ե.05.01	Ավտոմեքենաներ և տրակտորներ	1	
			Ե.20.01	Գյուղատնտեսության արտադրության մեքենայացում և մեքենաներ	1	
			Ե. 23.03	Շենքերի և կառույցների ճարտարագիտական /էներգետիկ, հիդրավլիկ և այլն/ ապահովում	1	
			Ե. 23.06	Գեոդոզիա, ներառյալ քարտեզագրություն և կադաստր	1	
			Ժ2.00.01	Անասնաբուժություն	1	
			Ը.00.02	Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում (ագրարային)	1	
			Ը.00.03	Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում	1	
	ԸՆԴԱՄԵՆԸ				8	
5.	Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարան	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	ԺԴ.00.03	Ներքին հիվանդություններ	-	1
			ԺԴ.00.04	Սրտաբանություն	1	
			ԺԴ.00.08	Ուռուցքաբանություն	1	
			ԺԴ.00.15	Վիրաբուժություն (կրծքային)	1	
	ԸՆԴԱՄԵՆԸ				3	1
6.	Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	Ե.23.01	Շինարարական կոնստրուկցիաներ, շենքեր, կառույցներ, շինարարական նյութեր և շինարարական մեխանիկա	1	1
			Ե.23.03	Շենքերի և կառույցների ճարտարագիտական (էներգետիկ, հիդրավլիկ և այլն) ապահովում	1	

			ԺԸ.00.01	Ճարտարապետություն և ճարտարապետական դիզայն	2	1
	ԸՆԴԱՄԵՆԸ				4	2
7.	Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	ԺԳ.00.01	Մանկավարժության տեսություն և պատմություն	1	
			ԺԳ.00.02	Դասավանդման և դաստիարակության մեթոդիկա (ըստ բնագավառների)	-	1
			ԺԹ.00.01	Ընդհանուր հոգեբանություն, հոգեբանության տեսություն և պատմություն, անձի հոգեբանություն	1	
	ԸՆԴԱՄԵՆԸ				2	1
8.	Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	Ժ.01.07	Արտասահմանյան գրականություն	1	
	ԸՆԴԱՄԵՆԸ				1	
9.	Երևանի գեղարվեստի պետական ակադեմիա	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	ԺԷ.00.03	Կերպարվեստ. դեկորատիվ և կիրառական արվեստ, դիզայն	1	
	ԸՆԴԱՄԵՆԸ				1	
10.	Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիա	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	Ե.13.02	Ավտոմատացման համակարգեր	1	
			Ը.00.02	Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտության կառավարում	1	
	ԸՆԴԱՄԵՆԸ				2	
11.	Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	Ժ.02.01	Հայոց լեզու	1	
	ԸՆԴԱՄԵՆԸ				1	
12.	Մատենադարան Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	Է.00.01	Հայոց պատմություն	1	
			Ժ.02.01	Հայոց լեզու	1	
	ԸՆԴԱՄԵՆԸ				2	
13.	Հայաստանում ֆրանսիական համալսարան	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	ԺԲ.00.03	Մասնավոր իրավունք	1	
	ԸՆԴԱՄԵՆԸ				1	

14.	Հայ-ռուսական համալսարան	ՀՀ կրթության և գիտության նախարարություն			15	
	ԸՆԴԱՄԵՆԸ				15	
15.	Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիա	ՀՀ Նախագահի աշխատակազմ	Ը.00.02	Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում	2	1
			ԺԹ.00.01	Ընդհանուր հոգեբանություն, հոգեբանության տեսություն և պատմություն, անձի հոգեբանություն	1	
	ԸՆԴԱՄԵՆԸ				3	1
16.	Ա. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)		Ա.04.02	Տեսական ֆիզիկա	1	
			Ա.04.16	Միջուկի, տարրական մասնիկների և տիեզերական ճառագայթների ֆիզիկա	1	
	ԸՆԴԱՄԵՆԸ				2	
17.	Սննդամթերքի անվտանգության ոլորտի ռիսկերի գնահատման և վերլուծության գիտական կենտրոն	ՀՀ Գյուղատնտեսության նախարարություն	ԺԶ.00.01	Անասնաբուժություն	1	
	Բանջարաբուստանային և տեխնիկական մշակաբույսերի գիտական կենտրոն		Զ.01.02	Բուսաբուծություն, խաղողագործություն, պտղաբուծություն և բույսերի պաշտպանություն	-	1
	ԸՆԴԱՄԵՆԸ				1	1
18.	Էներգետիկայի գիտահետազոտական ինստիտուտ	ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարութ	Ե.14.01	Էներգետիկ համակարգեր, համալիրներ, էլեկտրակայաններ և դրանց կառավարումը	1	
	ԸՆԴԱՄԵՆԸ				1	
19.	Մաթեմատիկայի ինստիտուտ	Գիտությունների ազգային ակադեմիա	Ա.01.05	Հավանականությունների տեսություն և մաթեմատիկական վիճակագրություն	1	
	Մեխանիկայի ինստիտուտ		Ա.02.04	Դեֆորմացվող պինդ մարմնի մեխանիկա	1	
	Կենդ. և հիդրոէկոլ. գիտական կենտրոն		Գ.00.08	Կենդաբանություն. մակաբուծություն. էկոլոգիա	1	
	Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտ		Ա.01.09	Մաթեմատիկական կիրառություններ և մաթեմատիկական տրամաբանություն	1	
			Ե.13.04	Հաշվողական մեքենաների, համալիրների, համակարգերի և ցան-	1	

			ցերի մաթեմատիկական և ծրագրային ապահովում		
		Ե.13.05	Մաթեմատիկական մոդելավորում, թվային մեթոդներ և ծրագրերի համալիրներ	1	
	Բյուրականի աստղադիտարան	Ա.03.02	Աստղաֆիզիկա, ռադիոաստղագիտություն	1	
	Երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմաբանության ինստիտուտ	ԻԴ.01.08	Երկրաֆիզիկա, օգտակար հանածոների որոնման մեթոդներ	1	
	Ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտ	Ա.04.21	Լազերային ֆիզիկա	1	
	Ֆիզիկայի կիրառական պրոբլեմների ինստիտուտ	Ա.04.07	Կոնդենսացված վիճակի ֆիզիկա	1	
	Ընդհանուր և անօրգանական քիմիայի ինստիտուտ	Ե.17.01	Անօրգանական նյութերի տեխնոլոգիա	1	
	Երկրաբանական գիտությունների ինստիտուտ	ԻԴ.01.01	Ընդհանուր երկրաբանություն	1	
	Հիդրոլոգիայի պրոբլեմների ինստիտուտ	Գ.00.07	Միկրոբիոլոգիա. կենսատեխնոլոգիա	1	
	Բուսաբանության ինստիտուտ	Գ.00.05	Բուսաբանություն. սնկաբանություն. էկոլոգիա	1	
	Հայկենսատեխնոլոգիա ԳԱԿ	Գ.00.07	Միկրոբիոլոգիա. կենսատեխնոլոգիա	1	
	Ֆիզիոլոգիայի ինստիտուտ	Գ.00.09	Մարդու և կենդանիների ֆիզիոլոգիա	1	
	Մոլեկուլային և կենսաբանության ինստիտուտ	Գ.00.03	Մոլեկուլային և բջջային կենսաբանություն	1	1
	Պատմության ինստիտուտ	Է.00.01	Հայոց պատմություն	1	
	Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտ	Ա.04.10	Կիսահաղորդիչների ֆիզիկա	1	
	Հնագիտության և ազգագրության ինստիտուտ	Է.00.03	Հնագիտություն	1	
	Արվեստի ինստիտուտ	ԺԷ.00.02	Երաժշտական արվեստ	-	2
		ԺԷ.00.03	Կերպարվեստ. դեկորատիվ և կիրառական արվեստ, դիզայն	1	
	Տնտեսագիտության ինստիտուտ	Ը.00.02	Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում	1	
		Ը.00.03	Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում	1	

	Լեզվի ինստիտուտ		Ժ.02.01	Հայոց լեզու	1	
			Ժ.02.02	Ընդհանուր և համեմատական լեզվաբանություն	1	
	Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտ		ԺԲ.00.01	Պետության և իրավունքի տեսություն և պատմություն, պետական և իրավական ուսմունքների պատմություն	1	2
			ԺԲ.00.05	Քրեական իրավունք և կրիմինալոգիա, քրեակատարողական իրավունք	1	
	Ցեղասպանության թանգ. ինստիտուտ		Է.00.01	Հայոց պատմություն	1	1
	Արևելագիտության ինստիտուտ		Է.00.02	Համաշխարհային պատմություն, միջազգային հարաբերություններ	2	
	ԸՆԴԱՄԵՆԸ				30	6
	ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՏԵՂԵՐ				6	-
	ԸՆԴԱՄԵՆԸ				140	13

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի վերաբերյալ

1. Անհրաժեշտությունը.

Նախագիծն ընդունվում է «Կրթության մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 6-րդ մասի և «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետին համապատասխան:

2. Ընթացիկ իրավիճակը և խնդիրները.

Գիտական դպրոցի պահպանման, զարգացման և երիտասարդացման գործունեություն ապահովելու նկատառումներից ելնելով հաճախ անհրաժեշտ է երիտասարդ կադրերի ներուժի ավելացում՝ հաշվի առնելով մասնագետների խիստ պակասը և գիտական տվյալ ուղղության զարգացման անհրաժեշտությունը:

Նախագիծը կարգավորում է շահագրգիռ կողմերի ներկայացվող պահանջները՝ մի շարք բնագավառներում երիտասարդ գիտական մասնագետների պատրաստման անհրաժեշտությունը և առաջատար, խոստումնալից ուսանողների մասնագիտական լիակատար պատրաստումը:

Նախագծով կարգավորվում է Հայաստանի Հանրապետությունում տվյալ ուսումնական տարվա ասպիրանտուրայի (առկա) և դոկտորանտուրայի ընդունելության տեղերի բաշխումը, հաստատումը և վերաբաշխումը, ինչպես նաև ասպիրանտուրայի (հեռակա) և օրդինատուրայի ընդունելության տեղերի բաշխումը և վերաբաշխումը:

«Հետբուհական մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող կազմակերպությունները, «Գյուղատնտեսության նախարարությունը և «Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարությունը և «Ներկայացրել են ասպիրանտական կրթական ծրագրով իրենց հայտերը:

3. Տվյալ բնագավառում իրականացվող քաղաքականությունը.

Նախագծի ընդունումը նպատակ ունի կանոնակարգել ՀՀ հետբուհական մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող կազմակերպությունների ասպիրանտուրայի ընդունելությունը:

4. Կարգավորման նպատակը և բնույթը.

Նախագծի ընդունման նպատակն է կանոնակարգել ասպիրանտական, դոկտորանտական և օրդինատուրայի կրթական ծրագրով բարձրագույն ուսումնական հաստատություններին և գիտական կազմակերպություններին ուսումնառության անվճար՝ առանց տարկետման և տարկետման իրավունքով տեղերի հատկացումը, ինչպես նաև կարգավորել ՀՀ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների ասպիրանտուրայի և դոկտորանտուրայի

ընդունելությունը և կարգավորել իրավական դաշտը տվյալ բնագավառում:

5. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք.

Նախագիծը մշակվել է ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից:

6. Ակնկալվող արդյունքը.

Որոշման ընդունումը կապահովի երիտասարդ մասնագետների պատրաստման շարունակականությունը ու նրանց ներգրավումը գիտական աշխատանքներում, որը հնարավորություն կտա պահպանել այդ ուղղություններով երկար տարիների ընթացքում ստեղծված բարձրակարգ գիտական դպրոցը և ապահովել նրա հետագա զարգացումը, որն էլ իր հերթին անհրաժեշտ նախապայման է երիտասարդ մասնագետների պատրաստման համար:

2017/2018 ուսումնական տարվա համար ՀՀ կառավարության հաստատմանն է ներկայացվել 379 տեղ ասպիրանտական կրթական ծրագրով ուսումնառությունը կազմակերպելու նպատակով, որից 140 տեղ առկա ուսուցմամբ՝ տարկետման իրավունքով և 202 տեղ հեռակա ուսուցմամբ՝ առանց տարկետման իրավունքի, 95 տեղ օրդինատուրայի կրթական ծրագրով, 20 տեղ ինտերն կրթական ծրագրով, 13 տեղ դոկտորանտուրայի կրթական ծրագրով:

Տեղեկանք

<<Հայաստանի Հանրապետության 2017/2018 ուսումնական տարվա ասպիրանտուրա ու դոկտորանտուրա ընդունելության տեղերը և առկա ուսուցմամբ ասպիրանտուրա ու դոկտորանտուրա ընդունելության տեղերի բաշխումը հաստատելու մասին>> Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման առնչությամբ պետական կամ տեղական ինքնակառավարման բյուջեների վրա ազդեցության մասին:

Որոշման ընդունման կապակցությամբ պետական բյուջեում կամ տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեներում ծախսերի և եկամուտների էական ավելացումներ կամ նվազեցումներ չեն սպասվում:

Տեղեկանք

<<Հայաստանի Հանրապետության 2017/2018 ուսումնական տարվա ասպիրանտուրա ու դոկտորանտուրա ընդունելության տեղերը և առկա ուսուցմամբ ասպիրանտուրա ու դոկտորանտուրա ընդունելության տեղերի բաշխումը հաստատելու մասին>> Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման առնչությամբ ընդունվելիք այլ իրավական ակտերի կամ դրանց ընդունման անհրաժեշտության բացակայության մասին

1. Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի մասին ընդունման առնչությամբ այլ իրավական ակտեր ընդունելու անհրաժեշտություն չկա:
2. Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը չի հակասում միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորություններին:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

**«Հայաստանի Հանրապետության 2017/2018 ուսումնական տարվա
ասպիրանտուրա ու դոկտորանտուրա ընդունելության տեղերը և առկա ուսուցմամբ
ասպիրանտուրա ու դոկտորանտուրա ընդունելության տեղերի բաշխումը
հաստատելու մասին»**

Առարկության, առաջարկության հեղինակը, գրության ստացման ամսաթիվը, գրության համարը	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունները
<p align="center">ՀՀ Ֆինանսների նախարարություն</p> <p align="center">մարտի 3-ի թիվ 01.1/83-2/3526-17 գրություն</p>	<p>Նախագծի 1-ին կետի 1-ին ենթակետի «բ.» մասում՝ նպաստի ձևով ուսման վճարի փոխհատուցմամբ, հեռակա ուսուցմամբ ասպիրանտուրա ընդունելության տեղերի (այսուհետ՝ ընդունելության անվճար տեղեր) գծով նշված 239, 3-րդ ենթակետում՝ ՀՀ պաշտպանության նախարարության համար ինտերնատուրա ընդունելության անվճար տեղերի գծով նշված 20, 4-րդ ենթակետում՝ դոկտորանտուրա ընդունելության անվճար տեղերի գծով նշված 14 թվերն անհրաժեշտ է համապատասխանեցնել ՀՀ 2017 թվականի պետական բյուջեի ծրագրային ցուցանիշների հաշվարկների հիմքում դրված ընդունելության անվճար տեղերի թվին (այն է՝ համապատասխանաբար 228, 12 և 13 տեղ), նկատի ունենալով, որ դրանց թվի ավելացումը կառաջացնի ընթացիկ տարվա պետական բյուջեից լրացուցիչ ծախսերի կատարման անհրաժեշտություն, համապատասխանաբար՝ 270.6, 6,068.9 և 291.0 հազ. դրամի չափով:</p>	<p>Առարկությունն ընդունվել է մասամբ</p>	<p>Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն, որի արդյունքում ընթացիկ տարվա պետական բյուջեից լրացուցիչ ծախսերի կատարման անհրաժեշտություն չի առաջանա:</p>
<p align="center">ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն</p> <p align="center">փետրվարի 27-ի թիվ ԱԱ/ԱՍ/1985-17 գրություն</p>	<p>Դիտողություններ և առաջարկություններ չունի:</p>		
<p align="center">ՀՀ առողջապահության նախարարություն</p> <p align="center">փետրվարի 28-ի թիվ ԼԱ/05/2295-17 գրություն</p>	<p>Դիտողություններ և առաջարկություններ չունի:</p>		

<p>ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն</p> <p>մարտի 6-ի թիվ 01/08.2.2/2119-17 գրություն</p>	<p>Դիտողություններ և առաջարկություններ չունի:</p>		
<p>ՀՀ բնապահպանության նախարարություն</p> <p>մարտի 6-ի թիվ 1/07.2/10486-17 գրություն</p>	<p>Դիտողություններ և առաջարկություններ չունի:</p>		
<p>ՀՀ գյուղատնտեսության նախարարություն</p> <p>փետրվարի 27-ի թիվ ՌՄ/ԻԾ/1565-17 գրություն</p>	<p>Դիտողություններ և առաջարկություններ չունի:</p>		
<p>ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն</p> <p>փետրվարի 24-ի թիվ 03/15/1010-17 գրություն</p>	<p>Դիտողություններ և առաջարկություններ չունի:</p>		
<p>ՀՀ արդարադատության նախարարություն</p> <p>մարտի 17-ի թիվ 01/14/4171-17 գրություն</p>	<p>Դիտողություններ և առաջարկություններ չունի:</p>		
<p>Հանրային քննարկում</p>	<p>Դիտողություններ և առաջարկություններ չունի:</p>		